Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024

Ապրիլի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից 5-7աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են ապրիլի 29-ին և 30-ին. երբ հանրապետության շրջանների զգալի մասում դիտված առավելագույն արժեքները գերազանցեցին պատմական արժեքներին: Տավուշում գրանցվել է +26...+30^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +22...+24^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +29...+31^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +28...+31^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +22...+24^{0}C, Շիրակում՝ +24...+28^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +23...+25^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +26...+28^{0}C, Գեղարքունիքում՝ +21...+24^{0}C, Լոռիում՝ +25...+29^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +31...+33^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +22...+24^{0}C, նախալեռներում՝ +24...+26^{0}C (Աշտարակ՝ +31^{0}C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանը Տավուշում գրանցվել է +8...+10^{0}C (Դիլիջան՝ +3^{0}C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +1...+3^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +6...+8^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +8...+12^{0}C, նախալեռնային շրջաններում +5...+7^{0}C (Սիսիան՝ 0^{0}C) Շիրակում՝ +2...+6^{0}C (Աշոցք՝ -1^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում -1...+4^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +7...+9^{0}C, Գեղարքունիքում՝ -1...+4^{0}C, Լոռիում՝ +2...+5^{0}C (Տաշիր՝ -1^{0}C), Արմավիրում, Արարատում՝ +7...+10^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -2...+1^{0}C, նախալեռներում՝ +7...+10^{0}C:

Տասնօրյակի ընթացքում ապրիլի 21-23-ին առանձին շրջաններում դիտվել են թույլ տեղումներ: Ողջ տասնօրյակի ընթացքում Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերում տեղումներ չեն դիտվել: Տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 0.3-0.4մմ(1-2%), Լոռիում՝ 5-6մմ (12-15%), Տավուշում՝ 3-4մմ (9-12%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 1-5մմ (2-15%), նախալեռներում՝ 0.3-2մմ (1-8%), Գեղարքունիքում՝ 1-6մմ (4-19%), Կոտայքի լեռնային շրջաններում տեղումներ գրանցվել են միայն Հանքավանում՝ 2մմ (5%), նախալեռներում՝ 0.7մմ (3%), Սյունիքում՝ 5-11մմ (19-29%):



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են ապրիլի 22-25-ն ընկած ժամանակահատվածում. լեռնային շրջաններում՝ -1...-4^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +1...+4^{0}C, Արարատյան դաշտում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +6....+8^{0}C:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



















Աշնանացան ցորեն

Հովտային շրջաններում աշնանացան ցորենը շարունակվել է գտնվել հասկակալման, նախալեռնային շրջաններում՝ ծեղացողունի ներքին հանգույցների առաջացման, իսկ լեռնային շրջաններում՝ ցողունակալման փուլերում:

Հովտային շրջաններում աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջում հասել է 50-56սմ-ի, լեռնային շրջաններում՝ 10-20սմ տասնօրյակային աճը կազմել է 5-6սմ:

Մերձավանում աշնանացան ցորենի դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի խոնավության պաշարները 0-10սմ շերտում՝ 10մմ, 0-20սմ շերտում՝ 30մմ, 0-30սմ՝ 57մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել է 12-26մմ-ով:

Պտղատուներ, խաղող

Հովտային շրջաններում շարունակվել է կորիզավոր պտղատուների աճն ու զարգացումը:

Հովտային շրջաններում շարունակվել է, նախալեռնային շրջաններում սկսվել՝ խաղողի վազի ծաղկաբույլերի առաջացումը:

Լեռնային շրջաններում հնդավորները ծաղկել են:

Խոտաբույսեր

Լեռնային շրջաններում շարունակվել է կորնգանի, հովտային շրջաններում ՝ առվույտի ցողունի աճը: Մերձավանում բույսի բարձրությունը տասնօրյակի վերջում կազմել է 55սմ, տասնօրյակային աճը կազմել է 11սմ: